
Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը, կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Սովորյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 576 էջ:

Դեռև 1981 թ. Երևանի պետական համալսարանի «Հայոց պատմության» ամբիոնը ձեռնամուխ էղակ «Հայ ժողովրդի պատմության» քառահատոր քրեստոմատիայի հրատարակման գործին: Տպագրվեց միայն առաջին հասորը (1981 թ.), իսկ մյուսները ինչ-ինչ պատճառներով, այդպես էլ լրիս չտեսան: Այնուհետև քառորդ դարից մի փոքր ավելի ժամանակ պահանջվեց, որպեսզի լրացվի այդ բացքողումը՝ առաջին հերթին շնորհիվ պատմաբաններ Պ. Հովհաննիսյանի և Ա. Սովորյանի եռանդուն ջանքերի: Սակայն, ի սկզբանե, անհրաժեշտ է խոստովանել, որ ներկայիս հրատարակությունը որպակապես տարբերվում է նախորդից և ոչ թե նրա կրկնությունն է: Այս նոր հրատարակությունը, ինչպես նշված է կազմողների կողմից գրված առաջարանում, լինելու է արդեն վեց հասորով և նախորդի նման ընդգրկելու է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Եթե նախորդ հրատարակության առաջին հասորն ընդգրկում էր հնագույն ժամանակներից մինչև IX դ. կեսերն ընկած ժամանակաշրջանը, ապա ներկայիս հրատարակության առաջին հասորում գետեղվել են մինչև III դ. վերջերին (Հայոց Արտավազը V թագավորի նամակը Շապուհ I-ին ըստ Տրեքելլիոս Պոլիոնի) վերաբերող նորությունը: Ինչի՞ մասին է հուշում այս հանգամանքը: Առաջին հերթին ավելացվել են տարբեր հիմնահարցերին վերաբերող մատենագիրների վկայությունները, ինչում կհամոզվենք ստորև: Հենց այս պատճառով էլ ավելացվել են բաժինները, որոնք այժմ թվով վեցն են: Այս ամենից զատ անցած 25 տարիների ընթացքում հոսել են շատ ջրեր, կատարվել բազմաթիվ նոր բացահայտումներ, հայտնաբերվել են մի շարք վիմագիր և այլ սկզբնադրյուրներ, որոնք պետք է իրենց արտացոլումն ստանային նաև նորակազմ

քրեստոմատիայում: Ուստի այժմ վերանայվել են ոչ միայն աղբյուրագիտական ցանկերը, այլև մեծ աշխատանք է իրականացվել ծանոթագրությունների և մեկնարանությունների կազմման խնդրում: Փաստորեն, եթե նախորդ հրատարակությունը հայոց պատմության քրեստոմատիա ստեղծելու առաջին փորձն էր, որը, բնականաբար, չէր կարող լինել անթերի, ապա այս անզամ, առաջին հերթին շնորհիվ Պ. Հովհաննիսյանի արդեն կուտակած արհեստավարժության և հմտության, ընթերցողի գրասեղանին է դրվել առավել կատարյալ ու անթերի մի ժողովածու:

Աշխատասիրողները քրեստոմատիան կազմել են ճիշտ նոյն սկզբունքով, որը բնորոշ է այսպիսի ժողովածուներին: Յուրաքանչյուր սկզբնադրյուրի բուն տեքստին նախորդում է նրա հեղինակ-մատենագրի համարու կենացքությունը (վիմագրի պարագայում, երբ, ինչպես և ում կողմից է գտնվել), որին հաջորդում է բուն տեքստը և ավարտվում մանրամասն ծանոթագրություններով: Նպատակահարմար ձևով է իրականացվել նաև վեց բաժինների դասակարգման սկզբունքը: Կարող է թվականը նշել բաժիններն ավելի են, քան պետք է լինեն, բայց հաշվի է առնվել մեկ խիստ կարևոր հանգամանք. այն, առաջին հերթին, ինչպես նշված է գրքի անոտացիայում, նախատեսված է ուսանողների, ապա միայն գիտական և ընթերցող լայն հանրության համար: Առաջին բաժնում տրված են հայ ժողովրդի ծագմանը վերաբերող հայկական, վրացական, հունական ավանդությներն ու պատմիչ Հերոդոտոսի վկայությունները նոյն հարցի կապականությամբ:

Առավել ուշագրավ է հաջորդ բաժինը, ուր ամփոփված են Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակություններին

առնչվող տարաքնույթ և բազմարովանդակ վկայությունները: Աստեղ ընդգրկված են հատվածներ սկսած Աստվածաշնչից և վերջացրած Դիորդոս Սիկլացուց ու Սովուես Խորենացուց: Միաժամանակ մեծ տեղ է հատկացված վիմագիր նյութերի տվյալներին, որոնք առնչվում են ինչպես շումերա-աքքադական դարաշրջանին, այնպես էլ ասուրա-բաբելոնյան և ուրարտական... Կազմողներն իրավացիորեն Ուրարտուին ազեի քիչ տեղ են հատկացրել, քանզի արդեն երապարակում կա Ն. Վ. Հարությունյանի կողողային աղբյուրագիտական ժողովածուն*:

Մեզ առանձնապես հետաքրքրեց երրորդ բաժինը, որն ամբողջապես վերաբերում է համահայկական առաջին պետականության՝ Երվանդունիների բազավորության դարաշրջանի աղյօտրագիտական մեկնաբանությանը: Նախորդ հրատարակությունում Երվանդունիները միացվել էին Արտաշիայաններին, որով ըստ Հուրյան, ստվերում էին մասում թէ՝ մեկը, թէ՝ մյուսը: Դրանով, կարծես թէ, անտեսվում էին երկու բազավորություններն էլ, որով հետև նրա անվանումը՝ «Հայաստանը հելլենիստական դարաշրջանում» բյուր գիտելիքներ ունեցողին կամ էլ սկսակին կանգնեցնում էր, մեղմ ասած, փակուղու առաջ: Ավելին, եթե հելլենիզմի ժամանակարարական անկման վերջնակետն է համարվում Ք. ա. 27 թ., երբ Եփալսոսը նվաճելեց Օլյոսավիանոսի կողմից, ապա հելլենիստական բարքերն ու սովորությունները շարունակեցին գոյություն ունենալ առնվազն հետագա 2-3 դարերի ընթացքում ևս, որի արդյունքում ձևավորվում էր անհամաձայնություն ժամանակի ու բովանդակության միջև: Եթե երրորդ բաժնում հավաքված և ներկայացված են Երվանդունիներին վերաբերող բոլոր առավել կարևոր վկայությունները, ապա հաջորդ բաժնում նույն կերպ, բայց առավել մանրամասն՝ Արտաշիայանների երկարյա գահակալության պատմությանն առնչվող տեղեկությունները: Ի՞նչ հանգամանքներով է առանձնանում Երվանդա-

կան պետությանը վերաբերող հասվածք: Կարելի է արձանագրել, որ դրանք համարյա թե մշտապես մնացել էին ստվերում և միայն վերջին տասնամյակներում էր, որ «Երվանդագիտությունը», շնորհիվ նշանավոր հետազոտողներ Գ. Խ. Սարգսյանի, Գ. Ա. Տիրացյանի, Ս. Մ. Կրկյաշարյանի, Բ. Հ. Հարությունյանի և այլոց, ապրեց ոռոշակի առաջընթաց: Այսպիսով, պարզապես, հասունացել էր այն պահը, որ Երվանդունիները ևս ընդգրկվեին առանձին բաժնում ու ներկայացվեին հավուր պատշաճ:

Այժմ կրկին վերադառնանք թվով չոր-
րորդ բաժնին, որն ամբողջովին վերաբե-
րում է Արտաշիսանների հայկական պե-
տականությանը: Ի տարբերություն Երիան-
դականների, նրանք գտնվել են մի շարք հե-
տազոտողների ուսումնասիրության կիզա-
կետում, ուստի նպատակահարմար ենք
համարում շրջանցել հարցի պատմագրա-
կան կողմը և կանգ առնել այն նորություն-
ների վրա, որ արկա են այստեղ: Խոսքը վե-
րաբերում է Ք. ա. I դ. վերջի և Ք. հ. I-ի
սկզբի հեղինակ Վելլեոս Պատերկուլոսի և
հանրահայտ U. S. Յիշերոնի (Ք. ա 106–43
թթ.) վկայությունների ընդգրկմանը: Ճիշտ
է, դրանք փորրածավալ են, ի տարբերութ-
յուն այլ բազմաթիվ մեծանուն հեղինակնե-
րի, ինչպես, օրինակ, Ստրաբոնի, Պլինիոս
Ավագի, Պլուտարքոսի, Հիոն Կասիոսի,
Հովսեապոս Փլավիոսի, Գ. Կ. Տակիտոսի,
մեր պատմահայր՝ Խորենացու, վրաց մա-
տունագիր՝ Լեռնատի Մրովելու և մյուսների,
բայց երբեմն վճռորոշ դեր է խաղում ոչ թե
ծավալը, այլ՝ նյութի որակական հատկա-
նիշները: Բաժնում ներկայացված են նաև
վիմագիր նյութերը և դրանց շարքում նոյն-
պես կատարված է մեկ կարևոր լրացում՝
«Ուշաբելրնյան սեպագրական ժամանա-
կագրության մի վկայություն Տիգրան Մեծի
մասին» վերտառությամբ (տե՛ս և էջ 318–319):
Դժբախտաբար, ատայժմ տեղ չեն գտել վեր-
ջին 2–3 տարիների ընթացքում Հայաստա-
նի Հանրապետության տարածքում հնագի-
տական արշավախմբերի կողմից հայտնա-
բերված Արտաշես I-ի հողաբաժն սահ-
մանաքարերում պարունակված տվյալնե-
րը, որոնք առայժմ կարու են մասնազի-
տական լուրջ ուսումնասիրության: Ինչ վե-

* Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

բարերում է նախկինում հայտնաբերված-ներին, ապա դրանք ներկայացված են այս գլխում (տե՛ս էջ 296–299):

Քրեստոմատիայի առանցքային մասեր են կազմում նաև հաջորդ երկու՝ հինգերորդ և վեցերորդ բաժինները, որոնցից առաջինում տրված են Արշակունյաց հարստության դարաշրջանին վերաբերող մատենագիրների գործերը, իսկ մյուսում՝ հին հայկական մշակույթին առնչվող տեղեկությունները: Կազմողներն իրավացիորեն Արշակունիների կապակցությամբ կատարել են յուրահատուկ բաժանում, քանզի տրված են մինչև III դ. վերջերին վերաբերող սկզբնաղյուրները: IV դարը Հայաստանի պատմության մեջ որակապես նոր

դարաշրջան էր, քանզի արմատավորվում են ավատատիրական կարգերը և անցում է կատարվում ուշ ստրկատիրությունից՝ վաղ ֆեոդալիզմին: Նոյնպիսի մոտեցում է ցուցաբերվել նաև մշակույթին վերաբերող բաժնում, քանզի դարաշրջանի փոխհարաբերությունները իրենց անջնջելի կնիքն են դնում նաև այդ ժամանակի մշակութային զարգացման միտումների վրա:

Ամփոփելով, պետք է արձանագրել, որ կատարված է մի շատ կարևոր և շնորհակալ գործ, որի օգտակարությունը պարզ ու ակնհայտ է ի սկզբանե, քանզի այս գործի առկայությունը մեծապես հեշտացնում է հին Հայաստանով զբաղվողների և հետաքրքրվողների աշխատանքը:

ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ